6· ՉԱԼԻ·—Ղազի գիւղի 1/2 ժամ արևելքն է Չալէ, 1 ժամ ևս Բլուրի արևմտեան հարաւն· բնակչաց թիւը 15 տուն՝ կէսն քուրդ, միւս կէսն գաղթական թուրքեր, Շեռեանայ ձախ եզրի վերան։

7· ԵՔՄԱԼ (մի տուն)·—Գիւղս Գումքից 1 1/2 ժամ արևելք, Բոշիկի հանդէպ է և 6 տուն բնակիչ ունի։

8· ՋԱՏՈՅ·—Գիւղս Եքմալի հարաւն 2 ժամ, Արածանիի աջ ափին վերայ մեծ քաւշանով գիւղ մի է։

Գիւղիս բարձրը՝ բլուրի մի վերայ կը գտնուի հայկական ընդարձակ գերեզմանատուն, խաչ քարինք և եկեղեցւոյ աւերակ մի։

Շեռեան Ջատոյի հիւսիսից կանցնի, կը խառնուի Մուրատի և ապա յարևելից կուղղուի ի հարաւ։ Կըղզիացած մի վայր է Ջատօն և Ջատոյի թեւն· հիւսիսից պատած է Շեռեան և յարևելից Մուրատ, յարևմտից և ի հարաւոյ ևս կեռած բարձր լեռներն, այնպէս կը պատահի որ տարւոյն 1/4 ը Ջրերու յորդած միջոցին դրսի հետ յարաբերութենէ կը զրկուին և կամ տարին քանի քանի մարդ Շեռեանայ կուլ կը գնայ։

Ջրերու պակսած միջոցին Գարաքիլիսէից մի ճանապարհ ևս Մանազկերտ, Պուլանուխ և Մուշ գնալու կարճ ճանապարհն ասոի կանցնի։

ՀԱՄԶԿԱՆ (Ցօնոյի) [1]·—Ջատոյի արևմտեան կողմն 35 տնուոր մի քրդական գիւղ է։

Այս տեղ շէյխ մի կը նստի, որ ամբողջ Բաղրևանդայ մէջ մեծ պատիւ ունի, ունի մրիաներ, երբ տնից

1· Համզկանները երկուք են, մին ևս մերձ Թ· գալէի, (ի հարաւ)։